

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՆԱԿՈԹ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏԻՊԱՅԻՆ /ՄՈՂՈՒԼԱՅԻՆ/ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/



«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

Ա. Մինասյան

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.5.1	Ներկա վիճակի նկարագիր	8
1.5.2	Նախատեսվող գործունեության նկարագիր	8
1.5.3	Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ	10
1.5.4	Իրավիճակային հատակագիծ	11
1.5.5	Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ	15
1.5.6	Ժամանակացույց	24
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	31
2.1	Շինարարության պայմանները	32
2.2	Աշխատանքների կատարման սխեմա	32
2.3	Շինարարության ժամկետները	33
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	33
2.5	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները	33
2.5.1	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	33
2.5.2	Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը	34
3.	ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ	35
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	55
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	61
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	63
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	67
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	70
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	71

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ծրագիր	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրում նախատեսվող 300 տեղ կրթահամալիրի կառուցում
Ծրագրի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ, ՀՎՀՀ 08914368
Ձեռնարկողի հասցե	ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7,
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս`	Էլ. փոստ` archicad1414@mail.ru Հեռ.` +374 33 25 20 64
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայր, դպրոցի շենք, 17 հողամաս, ծածկ` 09-013-0019-0002
Կառուցապատվող տարածքի մակերեսը	3,4հա
Կառուցապատման մակերեսը	3950 քմ կամ 30.9%-ը
Կանաչապատման մակերեսը	4075 քմ կամ 31.86%-ը
Կրթահամալիրի նախագծային հզորությունը	300 աշակերտ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԱԶԲ՝ Ասիական Զարգացման Բանկ

ԲԱՄ՝ Բողոքների արձանագրման մեխանիզմ

ԲԿՊ՝ Բնապահպանական կառավարման պլան

ՄԱԲ՝ Մեյսմիկ անվտանգության բարելավում

ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

ՀՀՇՆ՝ Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր

ՀՏԶՀ՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը

ՀՄԿ՝ Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն

ՇՆԿ՝ Շինարարական նորմեր ու կանոններ

ՍԹԿ՝ Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույնն շահակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից կրթահամալիր: Կրթահամալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Բռնակոթ բնակավայրում:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ- ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8) քաղաքաշինության բնագավառում՝ա. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով, կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ հաշվետվություն) փաստաթղթի պատրաստում և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացում:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի

բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Բոնակոթ բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Սյունիաի մարզ, Սիսիան համայնք, Բոնակոթ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ռազմարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)- Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հառաժեղությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից

առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում ՀՀ կառավարության 08.02.2018

թվականի N 108-Ն որոշում

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ընդունված 2002 թվականի հունիսի 4-ին /Սույն օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:/

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

ՀՀ Սյունիքի մարզ, Միսիան համայնք, Բոնակոթ բնակավայր, դպրոցի շենք 17 հողամասում նոր կառուցվող դպրոցի տիպային /մոդուլային/ շենք, 300 տեղ հզորությամբ նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատուի /ՀՀ քաղաքաշինության կոմիտե/ կոմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների: Ներկայացված նախագծի բարեկարգում զբաղեցնում է 3.4 հա և գտնվում է բնակավայրի հարավային հատվածում, ՈՒՆԻ խմելու և ոռոգման ջուր, բնական գազ, էլեկտրաէներգիա, աղբահանություն/: Հողամասի նպատակային նշանակությունը նույնպես համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության դրույթները նույնպես պահպանված են, հեռավորություն կարմիր գծից, հեռավորություն հարևան հողակտորներից:

Հողամասի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 09-013-0019-0002

Մակերեսի չափը՝ 3,4հա

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ Անհատույց օգտագործման

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով տեղամասում իրականացվել է ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:

Ինժեներաերկրաբանական պայմանների վերաբերյալ եզրակացության կազմելու համար, հիմք է ընդունվել 8,0 մետր փորված 3 հորատանցքերի, տվյալների հիման վրա: Կատարվել է նմուշարկում, վերցվել են փորձանմուշներ, որոնց համար ուսումնասիրվել են գրունտների գեոտեխնիկական հատկությունների ուսումնասիրություններ: Իրականացվել է տարածքի տեղանքի տեղազննություն, տեղանքում երկրաբանական մերկացումների նկարագրություն:

Երկրաբանական կառուցվածքը

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի օրգանական ծագման առաջացումները, ներկայացված դիատոմիտներով և դիատոմիտային կավերով :

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերևից-ներքև ներկայացված է հետևյալ գրունտային շերտերով.

Շերտ 1 Թափվածքային գրունտ, հզորությամբ 0,4-0,5 մետր

Շերտ 2 Դիատոմիտային կավեր, դիատոմիտներ, սպիտակավուն, դեղնավուն երանգով, խոնավ, բացված հզորությունը 7,5-ից 11,5մետր:

Ջրաերկրաբանական պայմանները Ստորգետնյա ջրերը տեղամասում փորված հորատանցքերով գտնվում են մինչև 3,5-ից 4,5 մետր խորության վրա: Ստորգետնյա ջրերը տեղամասում ունեն տեխնածին ծագում, չի բացառված ջրերի մակարդակի բարձրացում: Անհրաժեշտ է տեղադրել ցամաքուրդային ցանց:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Կրթահամալիրի

ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Բոնակոթ բնակավայր, դպրոցի շենք 17 հողամասում նոր կառուցվող դպրոցի տիպային /մոդուլային/ շենք, 300 տեղ հզորությամբ նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատույի /ՀՀ քաղաքաշինության կոմիտե/ կոմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների: Ներկայացված նախագծի բարեկարգում զբաղեցնում է 3.4 հա և գտնվում է բնակավայրի հարավային հատվածում, ՈԻՆի խմելու և ոռոգման ջուր, բնական գազ, էլեկտրաէներգիա, աղբահանություն/: Հողամասի նպատակային նշանակությունը նույնպես համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության դրույթները նույնպես պահպանված են, հեռավորություն կարմիր գծից, հեռավորություն հարևան հողակտորներից:

Նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են

Հողամասի ընհանուր մակերեսից

- 3950 քմ կամ 30.9%-ը նախատեսվում է կառուցապատել /դպրոցի մասնաշենք, պարիսպ, կաթսայատուն և այլն/
- 4075 քմ կամ 31.86%-ը կանաչապատել
- 1504 քմ կամ 11.76%-ը չի նախատեսվում մշակել, քանի որ հողամասին կից անցնում է 110կՎ լարման հոսանքագիծ, որից ըստ ՀՀՇ նորմերի անհրաժեշտ է պահպանել 20մ հեռավորությամբ անվտանգային գոտի և տվյալ մակարեսով տարածքը ենթակա չէ շահագործման
- 2053 քմ կամ 14.7%-ը նախատեսվում է բարեկարգել, որպես ճանապարհներ և սավաճքներ, վերջիններիս մակերևույթները նախատեսվում է իրականացնել ասֆալտաբետոնից, բազալտե, տուֆե և բետոնե սալերից:
- 408.35 քմ կամ 3.2%-ը նախատեսվում է իրականացնել միաձույլ ռետինե մակերևույթից, խաղաղապարակների կամ կից տարածքների բարեկարգման համար սպորտային միջոցառումների ժամանակ վնասվածքներից խուսափելու համար
- 800 քմ կամ 6.25%-ը նախատեսվում է փակել արհեստական խոտածածկույթով

Հողամասի մակերեսը ըստ սեփականության վկայականի 3.4 /հա/ է, իսկ ըստ կադաստրային քարտեզի 3.3923 հա, առկա անճշտությունը ենթակա է ուղղման: Հողամասում առկա է դպրոցի շենք բաղկացած 5 մասնաշենքից: նոր դպրոցի կառուցման աշխատանքների ժամանակ դասապրոցեսի անխախտելիությունը ապահովելու համար նախատեսվում է քանդել գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերից միայն 3-ը՝ այնուհետև նոր շինությունը շահագործման հանձնելուց հետո նախատեսվում է քանդել մյուս երկուսը:

Նոր կառուցվող դպրոցը բաղկացած է 4 հիմնական մասնաշենքերից, տր. ենթակայանից եվ կաթսայատնից: 1

Նկուղային և 3 հարկերից՝ ունեն 15,5x29մ առանցքային չափեր և 3.3 մետր վերգետնյա և 2.7մ նկուղային հարկի բարձրություն: Հետևյալ մասնաշենքը, որը մեծ սրահով եվ կենտրոնական մասում հիմնականում տեղավորված են լաբորատորիաները, ուսումնական սենյակները և անհատական պարապմունքների դասարանները, տնօրենի ընդունարանը, ուսուցչանոցը,

ուսմասվարի սենյակը: Մասնաշենքը ունի լայն և լուսավոր միջանցքներ, ռեկրեացիա, երկու թերին աստիճանավանդակներ են՝ դեպի դուրս ելքով եվ սանհանգույցներ աշակերտների, ուսուցիչների եվ սակավաշարժ խմբի երեխաների համար: Սակավաշարժ խմբի երեխաները որպեսզի կարողանան ուսումնական մասնաշենքի բոլոր հարկերով բարձրանան եվ իջնեն կենտրոնական հատվածում, սրահի հարևանությամբ նախատեսված է վերելակ: Ուսումնական մասնաշենքի երրորդ հարկում է գտնվում ռազմագիտության սենյակը իր զինանոցով: Ուսումնական մասնաշենքի տանիքը հարթ է՝ հարթ երկրորդ մասնաշենքը, որը մեծ սրահով եվ կենտրոնական աստիճաններով անմիջապես կից է ուսումնական մասնաշենքերին, գլխավոր մուտքի եվ սպասարկման մասնաշենքն է: Այն երկհարկանի է՝ նկուղային հարկով: Մասնաշենքն ունի 18,0x21,7մ առանցքային չափեր:

Հարկի բարձրությունը 3.3 մ է, իսկ նկուղային հարկում՝ 2,7մ: Այս մասնաշենքի առաջին հարկում են տեղավորված գլխավոր աստիճանները գլխավոր սրահով, որը մի կողմից կից է ուսումնական մասնաշենքի կենտրոնական սրահին, իսկ մյուս կողմից հանդիսությունների եվ մարզական դահլիճների մասնաշենքին: Առաջին հարկում է գտնվում ճաշարանը իր խոհանոցով, պահեստներով եվ սննդի ստացման կետով, պահակի և էլ. վահանակի սենյակը: Գլխավոր աստիճանները մասնաշենքի կենտրոնական հատվածից տանում են երկրորդ հարկի սրահ, որի առաստաղին տեղադրված է ապակեպատ երթիկը: Երկրորդ հարկում է գտնվում դպրոցի թանգարանը եվ գրադարանը իր գրապահոցով: Մասնաշենքի նկուղային հարկում է գտնվում ճաշարանի օդափոխության ներածման եվ արտածման ագրեգատները: Այս մասնաշենքի տանիքը նույնպես հարթ է՝ հարթ տանիքի դասական շերտերով:

Երրորդ մասնաշենքը, որը կից է գլխավոր մուտքի եվ սպասարկման մասնաշենքին, դա հանդիսությունների եվ մարզական դահլիճների մասնաշենքն է, որը ունի 42x30մ առանցքային չափեր:

Դահլիճային մասնաշենքը և առանցքների միջև երկհարկանի է, որտեղ տեղավորված են աստիճանավանդակը, ընդհանուր սանհանգույցը, բուժկետը՝ մեկուսարանով, իսկ աջ հատվածում մարզիչի սենյակն է եվ մարզադահլիճում մարզվող երեխաների հանդերձարաններով, սանհանգույցներով և ցնցուղարաններով:

Երրորդ մասնաշենքը կենտրոնական հատվածում ունի 6 մ լայնությամբ սրահ, որը բաժանում է մարզադահլիճը հանդիսությունների դահլիճից: Մարզադահլիճն ունի 24x18 մ, իսկ հանդիսությունների դահլիճը՝ 18x18 մ առանցքային չափեր: Դահլիճները եվ միջանկյալ սրահը ունեն երկհարկ բարձրություն:

Դահլիճային մասնաշենքերը ծածկված են սենդվիչ-պանելով, իսկ սրահի հատվածում՝ ապակեպատ երթիկ է: Նկուղում, որն ունի 1,8մ բարձրություն, տեղադրված են դահլիճների ներածման եվ արտածման օդափոխության համակարգերը: Մասնաշենքի երկհարկանի հատվածի երկրորդ հարկում նախատեսված են պարասրահ իր հանդերձարանով եվ սանհանգույցներով, հանդիսությունների դահլիճի անտրեսուլային հատվածը, տեխնիկական եվ օժանդակ սենյակները:

Բոլոր մասնաշենքերը հագեցած են ինժեներական եվ տեխնիկական ժամանակակից սարքավորումներով:

Նշեմ որ գոյություն ունեցող դպրոցի 2 մասնաշենքը ենթակա է քանդման առաջին փուլով, որի արդյունքում գոյանալու է 3683մ³ շին աղբ, ապա դպրոցի շինության կառուցմից հետո քանդվելու են հին դպրոցի և 3 մասնաշենք՝ 3073մ³ շին աղբով:

Բացի այդ նոր կառուցվող դպրոցի շենքի կառուցման փոստակի և հետագա բարեկարգման համար հողային աշխատանքների ծավալը կազմում է 30342.7խմ:

Էլեկտրատեխնիկական մաս

Նոր մասնաշենքերի ներքին էլեկտրական (արհեստական) լուսավորության և էլեկտրամատակարարման սույն նախագծի համար հիմք են հանդիսացել.

1. Շինության հատակագծերը
2. Տեղանքի հատակագծերը
3. Տեղազնման արդյունքները

Նախագծով նախատեսվում է դպրոցի մարզումների ու հանդիսությունների դահլիճների և ուսումնական 2 մասնաշենքի ներքին լուսավորության և էլեկտրամատակարարման ցանցերի իրականացում: Ինչպես նաև վերելակի էլեկտրասնուցման ապահովում:

Դպրոցի նոր կառուցվող մասնաշենքերի ամբողջ տարածքում արհեստական (էլեկտրական) լուսավորությունն ապահովվում է լուսադիոդային (LED) լուսատուների և լուսարձակների միջոցով: Դասասենյակներում լուսատուների խմբավորումն իրականացնել ըստ շարքերի՝ ապահովելով պատուհանից առավել հեռու շարքի առաջին հերթի միացում: Դասասենյակներում՝ գրատախտակի վերնամասում, պատի վրա, լրակազմի մեջ ներառված բարձակների միջոցով տեղադրվում են տեղային լուսավորության լուսատուներ: Մարզադահլիճում նախատեսվում են հարվածադիմացկուն և պաշտպանիչ ցանցով լուսարձակներ: Ներքին լուսավորության ցանցի լարանցումն իրականացվում է IIIBBII 2x1.5 քմմ տիպի, մակնիշի և կտրվածքի պղնձե բազմաջիղ հաղորդալարով:

Համակարգչային դասասենյակներում համակարգչային ցանցի բաշխիչների համար նախատեսվում են երկբևեռ կրկնակի վարդակներ: Նույն դասասենյակներում, ինչպես նաև ֆիզիկային դասասենյակում աշակերտների և դասավանդողի սեղանների վրա նախատեսվում են կահույքի մեջ ներկառուցվող երկբևեռ կրկնակի վարդակներ, վերջինները պետք է ՊԱՐՏԱԴԻՐ համալրված (ներառված լինեն վարդակի կառուցվածքի մեջ) դիֆերենցիալ հոսանքի անջատիչներով՝ 10 մԱ: Տեսահսկման համակարգի շՅԲ-ների վարդակները սնուցվում են էլ. վահանակային սենյակում տեղադրվող Անխափան Մնուցման Աղբյուրից (ԱՄԱ-UPS): Վերոնշյալ բոլոր վարդակները, ինչպես նաև դասասենյակների և աշխատասենյակների մնացած վարդակները նախատեսված են 16 Ա անվանական հոսանքով, երրորդ հողանցման հպակով և պետք է ունենան պաշտպանական սարքվածք, որն ինքնավար կերպով փակում է խրոցակային վարդակի բնիկը՝ հանված խրոցակի դեպքում: Մնուցման առանձին խումբ է նախատեսված հրդեհի ինքնավար ազդարարման ու պահնորդական ազդարարման համակարգի համար: Խստիվ արգելվում է այլ սպառիչների էլեկտրասնուցումը՝ ազդարարման և տեսաձայնագրման համակարգերի համար նախատեսված սնուցման կետերից

(վարդակներից): Ներքին էլեկտրամատակարարման ցանցի լարանցումն իրականացվում է ՍԻԲԲՊ 3x2.5 քմ տիպի, մակնիշի և կտրվածքի հաղորդալարով:

Ներքին լուսավորության և էլեկտրամատակարարման ցանցերի լարանցումն իրականացվում է փակ՝ սավաղի տակ, բացառությամբ կախովի առաստաղների տակ անցկացվող լարանցումը, որոնք անց են կացվում պոլիէթիլենային (ցածր ճնշման) ծալքախողովակով:

Սարքավորումները հատակի նիշից տեղադրել հետևյալ բարձրությունների վրա՝

Անջատիչ / աշխատասենյակներ	900 մմ
Անջատիչ / մնացած	1800 մմ
Վարդակ	200 մմ
Վարդակ / էլեկտրոնային գրատախտակ	1800 մմ
Վարդակ / ՀՅԲ	2200 մմ

Էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել ԷՏԿ-ի, ՀՀՇՆ 31-03.01-2014 - ի և գործող այլ հրահանգների նորմերի պահանջներով:

Ջրամատակարարում և ջրահեռացում

ա. խմելու տնտեսական ջրամատակարարում

բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի

գ. ներքին ջրհոս

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՇՈՒՊ 2.04.01-85: Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն ՇՈՒՊ 3.05.01-85

ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Կառուցվող դպրոցի ջրամատակարարումն իրականացվում է գործող Ø150մմ տրամաչափի ջրագծից:

Բժշկական կենտրոնի համար նախատեսված է երկու մուտքագիծ: Մուտքագծերի անցքը պատվում է ջրագազաանթափանց էլաստիկ նյութով:

Ջրամատակարարման ներքին ցանցը օղակաձև է: Հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսված է հակահրդեհային ծորակներ: Հակահրդեհային կանգնակները ընտրվել են Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող, տաք և սառը ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարը պոլիպրոպիլենե խողովակներից: Քանի որ հակահրդեհային և խմելու տնտեսական ջրամատակարարման համակարգերը միասնական են, հետևաբար անհրաժեշտ է հակահրդեհային կանգնակը վերջին հարկում միացնել սառը ջրի կանգնակներին:

Տաք ջրամատակարարման սնուցումն իրականացվում է կաթսայատնից: Տաք և սառը ջրամատակարարման խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

Կաթսայատան ջրամատակարարման սնուցումն իրականացվում է երրորդ մասնաշենքից, ջերմատարի վաքի միջով Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող խողովակով:

ՏՆՏԵՍԱ -ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԿՈՅՈՒԴԻ (Կ1)


Համակարգը նախատեսված է սանտեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել ներքին ցանցի համար D 50մմ և D 110մմ, կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) TY 21-26-100-80 խողովակներից:

Կոյուղու հորիզոնական միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով:


Խոհանոցային կոնքերի միացումը կոյուղու համակարգին իրականացվում է 2 մմ շիթի ընդհատումով:


Շախտաներում, կոյուղու կանգնակների ստուգիչների դիմաց, նախատեսվում է տեղադրել 25x25սմ չափսերի դռնակներ, ստուգիչների շահագործման համար:

1.5.3 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ



1.5.4 Իրավիճակային հատակագիծ






Աշխատանքների ծավալներ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՃԱՆՆԵՐ



ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՐ

ԳՈՂՈՒՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԾԱՌԱՍ, ՄՑ		ԼՃՈՒՄՆԵՐ
	ԼՈՒՑՔ (-)	ՀԱՆՈՒՑՅՈՒՑ (-)	
ՏԱՂՈՒՑԻ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԳՈՂՈՒՑ	+823,24	+13427,43	
ԾԱՆԱԳՐԱՐՉՆԵՐ		-1114,97	
ԿՈՏՑ ԼՃԱՆԱԳՐՎՈՂ ՄԱՌԵՐԻՆՈՒՑՅՆԵՐ		-98,45	
ԽՆՈՂԱՐԱՊԱՐԿ		-221,76	
ԸՆԴԱՄԵԼԸ	+823,24	-14862,61	

1. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼՃԱՆԱԳՐՎՈՂ ԵՆ ՀԱՆՈՒՑՅԱԾ ՈՒՆԻԵՑԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳՐԻ:
2. ՀՈՂՈՒ ԾԱՌԱՍՆԵՐԸ ՀԱՇՎԱԿԵՆԻՍ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՈՂԻ 10*10 Մ ԶԱՄԱՆՎՈՒՄԻ ՀԱՏԱԿԱԳՐՈՒՄԻ ԵՐԱԿՈՆԱԳՐԱԿԱՆ ՕՐԵՆՏԵՐ, ՈՐՈՒՆ ԴՈՂՅԵՆՏԻՆԵԼ ԵՆ ՏԻՅԱԼ ՀԱՏԱԿԱԳՐԻ ԿՈՂ:
3. ԼՃԱՆԱԳՐՈՒՄԻ ԼՈՒՆԵՐԸ ԴՐԱՑ ԵՆ ԸՍՏ ԿԵՐՏԱԿԱԿԱՆ ՄԱՌԵՐԻՆՈՒՑՅԱԾ ԿԵՐԻՆ ԼՈՒՑԱՅՈՒՑՆԵԼ, ՄԱՅՑ, ԳԱՇՈՒՄ:

	ԼՃ	Ա. ՊՐԻՍՏԱՆՆԱԿ		ԱՐ ԿՈՆՏՐԱԿՏԻ ՄԱՌԱՊԱՏՈՒՄԻ ԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՈՒՄՆԵՐԻ ԱՐԿԻՏԵԿՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՏՐԱԿՏԻ ՄԱՌԱՊԱՏՈՒՄԻ ԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՈՒՄՆԵՐԻ ԱՐԿԻՏԵԿՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ	ՊՐԻՍՏԱՆՆԱԿ	ՊՐԻՍՏԱՆՆԱԿ	ՊՐԻՍՏԱՆՆԱԿ
	ՍՏՐԱՏՈՐ	Ս. ՊՐԻՍՏԱՆՆԱԿ			ՍՏՐԱՏՈՐ	Ս. ՊՐԻՍՏԱՆՆԱԿ	ՍՏՐԱՏՈՐ
ՊՐԻՍՏԱՆՆԱԿԻ ԿՈՄԻՏԵ ԼՃԱՌԱՎՈՐ				ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ
ՊՐԻՍՏԱՆՆԱԿԻ ԿՈՄԻՏԵ ԼՃԱՌԱՎՈՐ				ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ	ՍՏՐԱՏՈՐ ԿՈՄԻՏԵ ՍՏՐԱՏՈՐ

1.5.5 Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 10 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

- Ավտոկռունկ **КС-55713-5В «Галичанин»**,
կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ինքնաթափ HOWO /3 հատ/ և KAMAZ/1 հատ/ կամ տվյալ տեսակին համարժեք
- Բետոնամղիչ արվտոմոբիլ ISuzu կամ նրան համարժեք /1 հատ/
- Էքսկավատոր DOOSAN /թրթուրավոր/ 1 հատ/
- Էքսկավատոր CAT 330 /հետ բահ/ 1 հատ/
- Շարժական կոմպրեսատոր /1 հատ/
- Էլ. եռակցման սարք СТН 550 կամ նրան համարժեք /4 հատ/
- բետոնատար մեքենա /պտտվող թափքով/ /2 հատ/
- Բետոնախտացնող սարք մակերևութային/ /2 հատ/
- Բետոնախտացնող սարք մակերևութային/ /2 հատ/
- Տոփանիչ /1 հատ/
- Տորկրետացման սարավորում /1 հատ/
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման եղանակները

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- տարածքի համահարթում,
- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/,
- հողային և կառուցման աշխատանքներ մինչև գրոյական նիշ,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատորով՝, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել BW 216 DH-4 գլոնով խորանարդային գրտնակով կամ CR 3/60 տիպի տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել KOMATSU D37-EX-22 հարթաշերտի 1.77 մ³ տարողությամբ բուլդոզեր:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կաղապարամածի կիրառումը:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կաղապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթրիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ–69Б ավտոբետոնախառնիչներով՝ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրամաբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջները

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1		Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ	
NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	HOWO	4
2	Էքսկավատոր	KAMAZ	1
3	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
4	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
5	Վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1

6	Տոփանիչ	CR 3/60	3
7	Գույքային կադրավարմած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Նռակցման տրանսֆորմատոր	СТН-500	3
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
15	Թրթրագլորն	НАМІ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

1.5.6 Ջրամատակարարում և ջրահեռացում.

Ջրապահանջի հաշվարկ

- Համաձայն տվյալների, ՀՀ Սյունքի մարզ, Միսիան համայնք, Բոնակոթ բնակավայրի միջնակարգ դպրոցի օգտվողների մարդկանց քանակը կազմում է 300 մարդ:
- Դպրոցը նախատեսված է 300 մարդու համար
- Շինության տիպը՝ ուսումնական հաստատություն:

Դպրոցի ընդհանուր հաշվային հատվածի առավելագույն վայրկյանային ելքը q_{max} լ/վ, հավասար է դպրոցի առավելագույն վայրկյանային ելքին՝

$$q_{max} = q_{max}^{նս}$$

Ցանցի հաշվային հատվածի առավելագույն վայրկյանային ելքը q_{max} լ/վ, պետք է որոշել հետևյալ բանաձևով.

$$q_{max}^{նս} = 5 \cdot q_0 \cdot \alpha \text{ լ/վ}$$

որտեղ՝ q_0 - ջրի վայրկյանային ելքն է, որի մեծությունը պետք է որոշել համաձայն ՇՀՈՒՄ 2.04.01-85-ի: $q_0 = 0.14$ լ/վ

α - գործակիցը, որը որոշվում է համաձայն սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածի:

$$NP = \frac{q_{\text{ժամ}} \cdot U}{q_0 \cdot 3600} = \frac{13 \cdot 300}{0.14 \cdot 3600} = 7,738$$

Շինարարական նորմերի 4-րդ հավելվածի 1-ին աղյուսակով անհրաժեշտ է դեկավարվել, երբ $P \leq 0,1$ և $N \geq 200$, P-ի և N-ի այլ արժեքների դեպքում α գործակիցը պետք է ընդունել համաձայն սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածի 2-րդ աղյուսակի՝ $\alpha=1,186$:

Ստացվում է՝

$$q_{max}^{նս} = 5 \cdot q_0 \cdot \alpha = 5 \cdot 0.14 \cdot 1,186 = 0,8302 \text{ լ/վ}$$

Հրդեհաշիջումը համաձայն ՇՀՈՒՄ 2.04.03-85-ի անհրաժեշտ է նախատեսել հրշեջ ծորակ ըստ հավելված 6 աղյուսակ 1-ի, որը կկազմի 5.0 լ/վ:

Արդյունքում ջրամատակարարման համար անհրաժեշտ է 5.0 լ/վ ջրարանակ:

«ԲԼՅՈՒ ՍԹՐԻՍ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ
Տնօրեն՝



Հ. Դավթյան



«ԲԼՅՈՒ ՄԹՐԻՄ ՍՈԼՈՒՇՆՍ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՎՀՀ-00910183

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նոր Նորք ԿԵ, Գյուրջյան 17-89, e-mail: bluestream2018@gmail.com
Ընկերության տնօրեն՝ Հայկ Դավթյան

**ՀՀ Սյունքի մարզ, Սիսիան համայնք, Բոնակոթ բնակավայրի միջնակարգ
դպրոցի գազամատակարարման համար**

Հաշվարկներիի համար հինք են հաղիսացել ճարտարապետական հատակագծերը ինչպես նաև կաթսայատան տեղակայված ջեռուցման կաթսանների այրիչների հաշվարկային հզորությունները:

Դպրոցի կաթսայատան ընդհանուր հաշվարկային ջերմային հզորությունը կազմում է 621660 կկալ, որը իրականացվում է 2 հատ 421կՎտ հզորությամբ տեղադրված կաթսաններով: Կաթսանների այրիչները ժամային ընդհանուր ծախսը կազմում է 82մ³/ժ:

Ընկերության տնօրեն

Հ. Դավթյան





«ԲԼՅՈՒ ՍԹՐԻՄ ՍՈԼՈՒՇՆՍ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Վ Հ Հ-00910183

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նոր Նորք ԿԸ, Գյուրջյան 17-89, e-mail: bluestream2018@gmail.com
Ընկերության տնօրեն՝ Դավիթյան

ՀՀ Սյունքի մարզ, Սիսիան համայնք, Բոնակոթ բնակավայրի միջնակարգ դպրոցի էլեկտրամատակարարման համար

Հաշվարկներիի համար հինք են հաղիսացել ճարտարապետական հատակագծերը ինչպես նաև СВОД ПРАВИЛ-ПРОЕКТИ*ОВАНИЕ И МОНТАЖ ЭЛЕКТРОУСТАНОВОК ЖИЛЫХ И ОБЩЕСТВЕННЫХ ЗДАНИЙ СП 31-110-2003

Դպրոցի ընդհանուր հաշվարկային հզորությունը կազմում է 106 կՎտ եռաֆազ, որի մեջ մտնում է վարդակային և լուսավորության ցանցը, ինչպես նաև օդափոխության և ջեռուցման սարքերի սնուցումը:

Ընկերության տնօրեն՝

Հ. Դավթյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
Էլ. հասցե <http://www.sisian.am/>
Էլ. փոստ sisiancity@sisian.am, sisisn.syuniq@mta.gov.am

Թիվ 1845
11 հուլիսի 2024թ.

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Կ. ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մինասյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Սիսիան համայնքի Բնակոթ բնակավայրի մոդուլային կրթահամալիրի կառուցման աշխատանքների ավարտից հետո դպրոցի ջրամատակարարումն իրականացնելու համար անհրաժեշտ պահանջվող ջրի քանակն ապահովում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, իսկ ջրահեռացման ցանց առկա չէ:

Կ. Իվանյան

1.5.6 Հրդեհի ահազանգման համակարգ

Հրդեհի ահազանգման համակարգ

Փորձարանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային /մոդուլային/ շենքի աշխատանքային գծագրերը կատարվել են ճարտարապետա-շինարարական հատակգծերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Նախագծի մշակման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը

- ՀՀՀ II-8.04-02-2005 - "ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԴԴԵԶԱՅԻՆ ԱՎՏՈՄՍԻԿԱ":
- ԷՍԿ - "ԷԼԵԿՏՐՈՎԱՑԱՆՔՆԵՐԻ ՍԱՐՔՎԱԾՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ":

Ավտոմատ հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է՝

- հրդեհի կենտրոնի հայտնաբերման համար,
- ազդարարման համակարգի միացման համար:
- օդափոխության և ծխահեռացման համակարգերի ղեկավարման համար:

Համակարգը բաղկացած է ընդունիչ հսկիչ սարքից՝ РУБЕЖ-20П R3 մակնիշի /2 օղակ, ամեն օղակին մինչև 250 հասցեային տվիչներ և այլ հասցեային սարքավորումներ միացնելու հնարավորությամբ/ պատի վրա տեղակայման բարձրությունը h=1500մմ: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային շարժման և մագնիսականտակտային ազդասարքերը, հասցեային հրդեհի ձեռքով գործարկվող ազդասարքերը, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ինտերֆեյսային մոդուլը, հասցեային սարքը անալոգային ազդասարքերը հասցեային սարքին միացնելու համար, ռելեների մոդուլները՝ ահազանգի դեպքում կատարող մեխանիզմներին գործարկելու համար:

Հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը տեղակայվում է շինության առաջին հարկում /0,100 նիշ/ գտնվող պահակակետում, որտեղ իրականացվում է շուրջօրյա հերթապահություն: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է ԱԲՆ միանալու բջջային կապով աշխատող ավտոմատ գանգահարող սարքով:

Տվյալ շինությունում բացառությամբ սանհանգույցների, թաց գործընթացով և 2 մ2 պակաս մակերեսով սենքերի, բոլոր տարածքներում նախատեսված են հասցեային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսված են հրդեհի հասցեային ձեռքի ազդարարիչներ /h=1500մմ/: Մարզարահում նախատեսված են ծխի գծային ազդասարքեր ռեֆլեկտորով, ազդասարքերը տեղակայվում են h=5400մմ բարձրության վրա պատի վրա, իսկ ռեֆլեկտորները h=7200մմ բարձրության վրա ազդասարքի դիմացի պատին:

Շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսված են լուսաձայնային ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում լուսաձայնային ինդիկացիայի համար, տեղակայման բարձրությունը h=2800մմ:

Շինության նկուղային հարկում նախատեսվում է հասցեային ռելեային մոդուլ՝ տեղակայման բարձրությունը h=1600մմ, հրդեհի ահազանգի դեպքում վերելակի ղեկավարման, օդափոխության համակարգի ներածման սարքավորումները հրդեհի դեպքում ավտոմատ անջատելու, ծխահեռացման կափույրների ակտիվացման համար:

Ռազմագիտության դասասենյակում և զենքի պահոցում նախատեսվում է դռների բացման հասցեային մագնիսական կոնտակտներ և շարման հայտնաբերման հասցեային ազդասարքեր տեղակայման բարձրությունը h=2300մմ, որոնք միանում են հրդեհի ահազանգման համակարգի հասցեային օղակին և ղեկավարվում են հասցեային ինտերֆեյսային մոդուլին միացված պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ սարքի՝ տեղակայման բարձրությունը h=1600մմ, միջոցով:

Բոլոր հասցեային ազդասարքերի, ազդարարիչների և այլ հասցեային միավորների միացումը հասցեային օղակին կատարվում են КСРЭВН(А)-FRLS 2x0.50 այրում չտարածող մալուխներով և նրանց սնումը կատարվում է հասցեային օղակից: Մալուխները անց են կացվում պատերի և առաստաղի վրայով բաց կամ սվաղի տակ:

Համաձայն գործող նորմերի հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը հուսալիության տեսանկյունից վերագրվում է 1-ին կատեգորիայի: Այդ պատճառով էլեկտրասնուցումը կազմակերպվում է անխափան սնուցման աղբյուրներից:

Հիմնական սնուցումը 220Վ 50Հց

Պահուստային սնուցումը՝ 2 հատ մարտկոցներից՝ 12Վ 7Ա

Հիմնական սնուցման բացակայության պայմաններում մարտկոցները թույլ են տալիս համակարգի աշխատանքային պահպանել հերթապահ ռեժիմում 24 ժամ, իսկ ահազանգի ռեժիմում 3 ժամ:

Էլեկտրասարքավորման պահպանիչ հողանցումը պետք է իրականացվի ԷՍԿ-ի համաձայն:

1. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

ա) ՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն"

գ) ՀՀՇՆ II-Պ. 8-71 "Հասարակական սննդի ձեռնարկություն "

դ) ՀՀՇՆ 31-06-2009 "Հասարակական շենքեր և կառույցներ"

ե) ՀՀՇՆ 24.01-2016 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

-Մեխանիկական ներածման և արտածման օդափոխություն նախատեսված է նկուղային հարկից (Ն1,Ա1) ,

բուֆետի և քիմիայի կաբինետից (Ն2Ա2) , հանդիսությունների դահլիճի համար (Ն4,Ա4) և մարզադահլիճից (Ն3,Ա3): Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման -արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով:

Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա , օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ :

Քիմիայի կաբինետի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական արտածում (Ա19):

Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է Ն2 ներածման համակարգ:

Դպրոցի -3.30 միշում օդի ներածումը և արտածումը նախատեսված է իրականացնել մեխանիկական դրդմամբ Ն1 Ա1 համակարգով, որի սարքը տեղադրված է ձեղնահարկում:

Սենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշված են համաձայն գործող նորմերի: Ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սան

հանգույցներից կանալային օդափոխիչներով:

Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են օդի կարգավորիչ փականներ ձեռքի կարգավորմամբ:

Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն СНиП 2.08.02.-89*:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից , որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում, իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՋԵՐՄԱՍԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

1. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի կաթսայատան նախագիծը կատարվել է համաձայն՝
 - ա) ջերմային ծախսերի: Տես աղյուսակ N1:
 - բ) ճարտարապետաշինարարական գծագրերի:
 - գ) կաթսայատան տեղակայման նորմերի (ՇՆ և կ II-35-76):
- Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն դպրոցին:
- Ջերմամատակարարման համակարգը փակ է:
- Ջերմատարը ջուր՝ $t_1=80^{\circ}\text{C}$, $t_2=65^{\circ}\text{C}$ (հաշվարկային):
- Կաթսայատան ջրամատակարարումը՝ ջրմուղից:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Ելնելով ջերմային հաշվարկային ծախսերից նախագծում նախատեսված են երկու ավտոմատացված ջրային էլեկտրոկաթսաներ 120կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը (բոլոր ջերմաստիճանային -15°C , -20°C , -25°C ռեժիմների համար):
- Կաթսայատանը տեղակայված են կաթսաները, թաղանթային ընդարձակիչ անոթը, պոմպերը, կոլեկտորները:
- Կաթսայատան օդափոխությունը նայել -3.20 միջի օդափոխության նախագծում:

3. ՋԵՐՄԱՍԵԿՈՒՄԱՑՈՒՄ

- Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով T1, T2, T3 և T4 խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակածն ջերմամեկուսիչով:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄՈՆՏԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոռեռակցումային ԳՈՍՏ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍՏ 32-62-82 պողպատյա խողովակներով:
- Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավլիկ փորձարկման:
- Խողովակաշարերը մոնտաժվում են $I=0,002$ մ/մ թեքությամբ, խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից՝ ջրի դատարկում:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ» համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի» արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման» հրահանգման ժամանակին և որակով անցկացման» անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման» արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Շինարարության պայմանները

Միջնակարգ դպրոցի շինարարության տեղամասն՝ ըստ երկրաբանական հետազննության արդյունքների ռելիեֆը հարթ է, փոքր թեքությամբ:

Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևույթները բացակայում են:

2.2 Աշխատանքների կատարման սխեմա

Նախապատրաստական փուլ Նախապատրաստական

փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս, բանվորների առավելագույն քանակը 16 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Նախատեսվում է տեղափոխել համայնքապետարանի կողմից հատկացված վայր, ինչը ճշտման փուլում է, իսկ ասբեստ պարունակող թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Սիսիան համայնքի կողմից ՀՀ օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

2.5.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

2.5.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախագուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը՝ լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան (վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ՝ 200 մ² մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի, արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները՝

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով տեղամասում իրականացվել է ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:

Ինժեներաերկրաբանական պայմանների վերաբերյալ եզրակացության կազմելու համար, հիմք է ընդունվել փորված հորատանցքերի, տվյալների հիման վրա: Կատարվել է նմուշարկում,

վերցվել են փորձանմուշներ, որոնց համար ուսումնասիրվել են գրունտների գեոտեխնիկական հատկությունների ուսումնասիրություններ: Իրականացվել է տարածքի տեղանքի տեղազննություն, տեղանքում երկրաբանական մերկացումների նկարագրություն:

- Կլիմայական պայմանները

Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Սիսիան օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք «Շինարարական կլիմայաբանություն »ՀՀՇՆ 22-01-2024փաստաթղթից:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

«ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻՆՆԵՐ (ՀՆԳԱՍՅԱ ՄԻՋԻՆ)»

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ3
Կապան	Ազոտի երկօքսիդ	0.012
	Ծծմբի երկօքսիդ	0.018

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈԱՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

24.	Սիսիան	-4.3	-2.8	1.2	6.8	11.5	15.2	18.1	17.9	14.1	8.6	2.7	-2.2	7.2	-34.4	36.2
-----	--------	------	------	-----	-----	------	------	------	------	------	-----	-----	------	-----	-------	------

Աղյուսակ 2 Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

51.	Սիսիանի լեռնանացք	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.9	2.6	-26	31
-----	-------------------	------	------	------	-----	-----	-----	------	------	-----	-----	------	------	-----	-----	----

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընդամենը
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

24.	Սիսիան	մ. ա.	1.9	3.1	7.0	13.2	18.3	21.9	24.6	24.9	21.7	16.4	9.7	4.2	13.9
		մ. ն.	-9.6	-8.0	-3.9	1.1	5.3	8.4	11.3	10.7	7.3	2.2	-2.8	-7.3	1.2

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

24. Սիսիան	ա	15.2	16.3	22.1	27.0	29.5	33.0	36.2	36.0	35.4	28.4	22.5	19.2	36.2
	ն	-34.4	-31.0	-28.9	-18.2	-6.2	-1.2	1.3	1.0	-3.8	-14.7	-25.6	-29.9	-34.4

Աղյուսակ 5 Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

(օդի 0°C ջերմաստիճանի կայուն անցումը գարնանը և աշնանը)

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4

24. Սիսիան	30 նոյեմբեր	8 մարտ	99
------------	-------------	--------	----

Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10
Սիսիան										
70. Դեկտեմբեր	4.1	22	1.4	12	0.3	5				
71. Հունվար	6.5	22	2.3	16	0.6	7	0.1	3		
72. Փետրվար	4.0	17	1.6	13	0.3	6	0.02	2		

Աղյուսակ 8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8

Ամիս	1	2	3	4	5	6	7	8
Սիսիան								
70. Հունիս	6.5	18	0.3	3				
71. Հուլիս	14.7	29	1.9	14	0.1	1		
72. Օգոստոս	16.0	30	2.1	10	0.1	1		

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

24. Սիսիան	ա.մ.	8.0	9.5	14.8	21.0	25.0	28.2	30.5	30.9	29.1	23.8	17.1	11.5	32.2
	ն. մ.	-20.6	-19.1	-13.7	-5.8	-0.3	3.4	6.5	5.6	1.2	-4.1	-11.4	-18.1	-23.7

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
24. Սիսիան	71	71	72	70	71	69	65	65	70	72	73	73	70	71	57	65	48	

Աղյուսակ 13 Մթնոլորտային տեղումները (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը — միջին ամսական — մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	օրական առավելագույն														
	ըստ ամիսների														
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	15	16	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
51. Սիսիանի լեռնանցք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	757	314	443
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45	91		

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 **Ձյան ծածկույթ** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
61. Սիսիան	36	67	90	88

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների			Անորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղություն հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ	Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
30. Սիսիան	հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1.9	ՀվԱրլ	4.5	ՀսԱրմ	3.9
		3.5	2.6	3.6	2.5	2.5	3.5	3.6	3.9						
	ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2.0				
		3.4	3.2	4.1	3.7	3.4	4.0	3.6	3.9						
	հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3.1				
		3.1	4.4	5.0	4.5	3.6	3.7	3.3	3.0						
	հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1.6				
		2.7	2.8	4.2	3.2	2.9	3.9	3.7	3.8						

Աղյուսակ 16 **Քամու հաշվարկային արագությունը**

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ)օրերի միտումը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7

24. Սիսիան	842.6	2.0	3	16	17	18
------------	-------	-----	---	----	----	----

- Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2021 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը բնակավայրում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկած համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



- Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության

6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: /2022թ/

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և ալյումինով:

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում իոնով, մոլիբդենով, վանադիումով, կոբալտով, կալիումով, նատրիումով, ընդհանուր անօրգանական ազոտով, սուլֆատ իոնով և կախությային չոր նյութերով:

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Աճանան գյուղից վերև՝ պայմանավորված վանադիումով, գետաբերանում՝ մոլիբդենով, մանգանով, վանադիումով, կոբալտով և սուլֆատ իոնով:

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և երկաթով:


Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև և Սիսիան քաղաքից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Գորայք գյուղից վերև՝ պայմանավորված մանգանով, Սիսիան քաղաքից վերև՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով և վանադիումով, Սիսիան քաղաքից ներքև՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և ներքև ընկած հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Գորիս քաղաքից վերև՝ պայմանավորված կախությային չոր նյութերով, Գորիս քաղաքից ներքև՝ ամոնիում իոնով:

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված սուլֆատ իոնով:

**ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը / 2022 թվական**



- Հողածածկ

Բռնակոթ բնակավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մխիթանի տարածաշրջանում և պատկանում է չոր տափաստանային բնահողային գոտուն, որտեղ տարածված են շագանակագույն տիպի հողերը, իրենց բազմաթիվ ենթատիպերով: Այս տիպի հողերն ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջին կավավազային են և ունեն հետևյալ առանձնահատկությունները. առաջին՝ հումուսի միջին պարունակությունը 2-4% է, երկրորդ՝ քարքարոտ են, երրորդ՝ աչքի են ընկնում խիստ արտահայտված, մասամբ ցեմենտացված

Էյուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ, չորրորդ՝ ունեն թույլ հիմնային և հիմնային ռեակցիա (рН 7.4-8.5), հողի կլանունակությունը 30-35 մգ/էկվիվալենտ է և հինգերորդ՝ ունեն անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

Բուսաշերտը դիտարկվող տարածքում առկա է շինություններից ազատ տեղամասերում: Բուսաշերտի հզորությունը տատանվում է 10 – 15 սմ:

Ծրագրի իրականացման տարածքի հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խառը կառուցապատման է: Ծրագրի իրականացման տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները պաշտոնական տեղեկագրերում բացակայում են, նաև մինչ այժմ ծրագրի իրականացման տարածքում որևէ արտադրական և/կամ գյուղատնտեսական գործունեություն չի իրականացվել, ուստի ծրագրի իրականացման տարածքի հողերը աղտոտված չեն կարող լինել:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթը և բնահողը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որոնք հետագայում նախատեսվում են օգտագործել: Հեռացված գրունտի մի մասն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ մնացած հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված վայր:

3.1 Կենսաբազմազանություն

- Բուսական աշխարհ

Ներկայացվող տարածքը վերընթաց լանդշաֆտային գոտիներից զբաղեցնում է չոր տափաստանային ցածր լեռնային գոտին, որին առանձին տեղամասերում մանավանդ հարավահայաց և անջրդի/ բնորոշ է Կիսաանապատային, իսկ հիմնականում՝ Տափաստանային բուսածածկի տիպը:

Հայցվող տարածքում աճում են տփիկ (*Elymus L.*), այծակն գլանաձև (*Triticum cylindricum*), որում բազմամյա (*Lolium perenne L.*) սեզ սողացող (*Elytrigia repens L.*), շյուղափոխ (*Festuca valesiaca Gaudin*), խոզանուկ (*Setaria viridis (L.) P. Beauv*), ռեմերիա (*Roemeria macrostomum Boiss. et Huet*), խոտածաղիկ հարթ (*Herniaria glabra L.*), աովույտ կիսաուլոր (*Medicago hemicycle Grossh.*), զազ խոնարհված (*Astragalus declinatus Willd.*), քարաովույտ երփներանգ (*coronilla varia L.*), սրճուկ խոցված (*Hypericum perforatum L.*), մանուշակ գիշերային (*hesperis L.*), տուտղավարդ թավրիզյան (*Alcea flavovirens var. tabrisiana*), եզնակող կլորատերև (*bupleurum rotundifolium L.*):

ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված բուսատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

Կենդանական աշխարհ

Ուսումնասիրվող տարածքի գտնվում է Սիսիանի տարածաշրջանում, որտեղ

անողնաշարավոր կենդանիները բնութագրվում են համամատաբար աղքատ և միատեսակ կազմով: Ծրագրի իրականացման արածաշրջանում հանդիպում են հանդիպում են ճարպիկ մողես (*Lacerta agilis*), որդանման կույր օձ (*Typhlopidae vermicularis*), բազալտի բեկորներով կազմված փոքր անձավում նշվել է կանաչ դողոշ (*Pseudepidalea viridis*): Բզեզներից նշվել է թարախահան (*Meloe proscarabaeus*), բրոնզաբզեզներ (*Cetoniinae Leach*), գատկաբզեզը (*Coccinella magnifica*), թիթեռներից՝ Ագեստիս կապտաթիթեռ (*Aricia Agestis*) և կաղամբաթիթեռ (*Pieris brassicae*): Տարածքում առկա են սովորական դաշտամկան (*Microtus arvalis*) բազմաթիվ բներ, որոնցից բնակեցված երկուսը: Դիտարկվել է նապաստակ (*Lepus europaeus*), ըստ բնակիչների հետ իրականացված քննարկումների՝ տարածքում հայտնի են աղվես և գայլ: Թռչուններից դիտարկվել են սովորական կաչաղակ (*Pica pica*), տնային ճնճղուկ (*Passer domesticus*):

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում վայրի կենդանատեսակներ չեն կարող լինել:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված կենդանատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

Ըստ ՀՀՇՆ 20.04.2020թ. «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմերի»՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՅՄՄԻԿ ՎՏԱՆԳԻ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ**

50 ՏԱՐՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ
ԱՐԱԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ
10% ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ



- Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ների՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակում:

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Մատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Միսիան քաղաքի հս-արլ եզրին

«Անանուն» ռեզիդենտ փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
1	2
«Մալնի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ
«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» էրոզիոն ռեզիդենտ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
1	2
«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթն գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ազարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ազարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա

«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ

1	2
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
«Պատավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
«Մեղրիի սուսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիբլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆագնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային

	ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Զրադացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արև, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրադացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա

1	2
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրադացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արև, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արև ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արև, ճամփեզրին, խաչքարի մոտ
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արև ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շոան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արև, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Ոչիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից նախատեսվում է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

- Սոցիալական պայմանները

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է

Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Ջանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, ար-տադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ 17 գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող

միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 42.0 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 6.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ:

ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում 18 առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 19.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 14.4 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 4.2 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսակետերը:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 135.8 հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 91.8հազ.մարդ, գյուղականը՝ 44.0հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքը 2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 359754.9մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 102.8%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ. հանքագործական արդյունաբերություն – 301645.8մլն.դրամ, մշակող արդյունաբերություն – 32924.3մլն.դրամ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 24019.9մլն.դրամ, ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 1164.9մլն.դրամ:

3.2 Պատմամշակույթային հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2005 թվականին հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 68 հուշարձան (17 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Աղբյուր «Թումի»	1640 թ., վերակառ. 1989 թ.	գյուղի մեջ
Խաչքար	10-11 դդ.	աղբյուրի մոտ
Ամրոց Որձաբերդ - 1	մ.թ.ա. 1 հզ կեսեր	գյուղից 500 մ հս
Ամրոց Որձաբերդ - 2 (Ծաղկավան)	մ.թ.ա. 1 հզ 2-րդ կես - միջնադար	գյուղից 1.5 կմ հս-աե
Բնակելի քարայրներ	ուշ միջնադար	գյուղից 1-2 կմ հս-աե, «Ծակերի ձոր» վայրում
Գերեզմանոց	միջնադար - 20 դ.	գյուղի ամ կողմում
Խաչքար	11 դ.	
Գերեզմանոց	միջնադար - 20 դ.	գյուղի հս եզրին, Բարձունքի վրա
Խաչքար	10 դ.	
Տապանաքար Կիլիկի	1683 թ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Տապանաքար Միլիմանի	1683 թ.	
Գերեզմանոց	միջնադար- 20 դ.	գյուղի հս-աե կողմում, Բռնակոթ - Սիսիան ճանապարհից ձախ
Խաչքար	9-10 դդ.	գերեզմանոցի կենտրոնում
Գյուղատեղի Կլեվանս	15-19 դդ.	գյուղից 2 կմ հս
Գյուղատեղի Կորովի	միջնադար - 19 դ. սկիզբ	գյուղից 1 կմ ամ
Եկեղեցի Սբ. Գրիգոր	1704 թ.	գյուղի կենտրոնում
Գավիթ	1848 թ.	կից է եկեղեցուն հվ-ից
Խաչքար	1358 թ.	ազուցված է գավթի աե պատին, ներքուստ
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է գավթի աե պատին, ներքուստ
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է գավթի ամ պատին, ներքուստ
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է գավթի հս պատին, ներքուստ
Գերեզմանոց	19 դ.	եկեղեցուց հվ
Խաչքար	11 դ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	12 դ.	ազուցված է եկեղեցու հս ճակատին
Խաչքար	12-13 դդ.	ազուցված է եկեղեցու հվ պատին, մուտքից աջ
Խաչքար	12-13 դդ.	եկեղեցու երկրորդ հարկի հվ-աե ավան- դատան հվ խորշում
Խաչքար	1554 թ.	եկեղեցու հվ-աե ավանդատնից թաքստոց տանող բացվածքում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու երկրորդ հարկի հվ-աե ավան- դատան հս խորշում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու հվ-աե ավանդատնից թաքստոց տանող բացվածքում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու երկրորդ հարկի հվ-աե ավանդատան հվ խորշում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու երկրորդ հարկի հվ-աե ավանդա- տան հս խորշում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու երկրորդ հարկի հվ-աե ավանդա- տան հս խորշում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու հս-աե ավանդատնից թաքստոց տանող բացվածքում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու հս-աե ավանդատնից թաքստոց տանող բացվածքում
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու խորանի հվ խորշում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	16-17 դդ.	Եկեղեցու խորանի հվ խորշում
Խաչքար	16-17 դդ.	Եկեղեցու խորանի հվ խորշում
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հվ պատին
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից ձախ
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից ձախ
Խաչքար Աղամի	1551 թ.	ազուցված է եկեղեցու հվ պատին, մուտքից ձախ
Խաչքար Աղաջանի	16-17 դդ.	Եկեղեցու խորանի հս խորշում
Տապանաքար	1428 թ.	ազուցված է եկեղեցու հվ պատին
Տապանաքար	1541 թ.	ազուցված է եկեղեցու հվ պատին
Տապանաքար	1563 թ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից աջ
Տապանաքար	1571 թ.	ազուցված է եկեղեցու հս պատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հվ ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հվ ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հվ ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Տապանաքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու աե ճակատին
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	գյուղի կենտրոնում
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1950 թ.	գյուղի մեջ
Խաչքար	10-11 դդ.	հուշարձանի մոտ
Խաչքար	11 դ.	հուշարձանի մոտ
Տապանաքար	16-17 դդ.	հուշարձանի մոտ
Հուշարձան Երկրորդ	1988 թ.	գյուղի կենտրոնում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
աշխարհամարտում զոհվածներին		
Հուշարձան Կոմիտասի		գյուղի մեջ, բլրագագաթին
Հուշարձան Սամսոն Մկրտումյանի և Լիպարիտ Իսրայելյանի	1970-ական թթ.	գյուղի մեջ
Մատուռ	միջնադար	գյուղից մոտ 2 կմ աե, «Խաչեր» վայրում
Խաչքար	10-11 դդ.	ավերված մատուռում
Շենք դպրոցի	1882 թ.	գյուղի մեջ

Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավոր - թույլան դասը	Ծածկագիրը ըստ «Թափոններ ընկալման»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ կառուցման ժամանակ	IV	9120060101004	30342.7 խմ
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ(բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	9մ ³

Շին աղբի ծավալը 30342.7 խմ:

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կրթահամալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

- Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

- Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն
- Մթնոլորտային օդ

Օդային ավազանը ադոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
 - շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատասխան բարձրության
 - շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
 - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
 - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
 - իրականացնել շինտեխնիկայի անվտոգության լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
 - սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

- Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի

սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրոշմի:
- Նախատեսվում է համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ ՈՀիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել

նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

Աղմուկ և թրթռում

Աղմուկի մակարդակներ գնահատվում են շինարարության ընթացքում, աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Աղմուկի մակարդակը կկառավարվի համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացմամբ: Հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

Տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

Ավտոտրանսպորտը և շինարարությունը

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է գյուղը, որը գտնվում է հայցվող տարածքից զգալի հեռավորության վրա:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ):

Տարածքում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը $LA_{էկվ}$ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$$

Որտեղ՝

$LA_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ}=79$ դԲԱ

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

$\Delta LA_{հեռ}$ 500մ-ի վրա կազմում է 28դԲԱ

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: $\Delta LA_{էկր}$
=14դԲԱ

Կրթահամալիրի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ ռոտիով,

$\Delta LA_{կանաչ}=0$ դԲԱ Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ $LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 79 - 28 - 14 = 37$ դԲԱ

Հաշվի առնելով կրթահամալիրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը զիջերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32դԲԱ (նորման 35դԲԱ):

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Թափոնների կառավարում

Կրթահամալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված

լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Առաջացել շինարարական աղբը՝ թափոնը նախատեսվում է տեղափոխել համայնքապետարանի կողմից հատկացված վայր, ինչը ճշտման փուլում է, իսկ ասբեստ պարունակող թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 850 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 900 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար</p> <p>Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության միջոցների սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի հորի միջոցով</p>

		(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/կանաչապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>- ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույթները կիրականացվեն ազդակակիր</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն</p>

		<p>- Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>
--	--	---

<p>Թափոններ կառավարում</p> <p>▪</p>	<p>Շին աղբի տեղադրում</p> <p>անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցողաղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
-------------------------------------	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողության թյուն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներ ից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովման Բ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիկ մների շահագործման ընթացքում	Կապալառու

	- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում				
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր - կենսաբազմ ազանություն	Շինհրապարակ Տարածքի և հարակից տարածք	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներ ից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում Արտաքին գնում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՁԿՆ 1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Սյունիքի մարզ քաղաք Սիսիան
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՈՒՄՔ)

N 6 18 հունվար 2024 թ.

Օրյելտ Նոր կառուցվող դառոցի տիպային (մոդուլային) շենք, 300 տեղ հզորությամբ
(օրյելտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
15.5x60մ, 18x21.7մ և 42x30մ արանգրային չափերով, 300 տեղ հզորությամբ

(հավիճ բնորոշումը, հզորությունը
Քարծր ժելատինային աստիճան (IV կատեգորիա) 1 փուլ աշխատանքային նախագիծ
Ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ՀՀ Սյունիքի մարզ Սիսիան համայնք, Բրնակոթ քնակավայր, դառոցի շենք
17 հողամաս (ծածկ՝ 09-013-0019-0002)

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող ՀՀ քաղաքաշինության կոմիտե, կառավարական տուն 3, հեռ. 011-62-17-75 info@minurban.am

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

Առաջադրանքի տրամադրման հիմքը կառուցապատման հայտ, անշարժ գույքի նկատմամբ
իրավունքի պետական վկայական N 384293

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի
փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

3 տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից
ներկայացվող ամփոփ պլանայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, իրավունքի տեսակը՝ մշտական օգտագործման, վկայականի համար՝ N 384293
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

3.4 հա

(հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

առկա են շինություններ

(ռեչիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, քարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

իմայնրային ճանապարհներ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր
և սարքավորումներ
(ջրամատակարարման,
կոյուղու, գազամատակարարման,
տաք ջրի մատակարարման,
էլեկտրամատակարարման,
էլեկտրոնային հաղորդակցության
համակարգեր)

առկա են

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական
ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

առկա են

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն
ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և
(կամ) պատմամշակութային
հուշարձանների տարածքներ
(պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային
սահմանափակումներ

չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների,
ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ
սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից
ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային
պահանջներ

**Մշակել 300 տեղ հզորությամբ դպրոցի տիպարային
շենքի նախագիծ հաշվի առնելով պատվիրատուի
պահանջները և ՀՀ օրենքները**

(ենելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և
նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա
քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց
քաղաքաշինության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող)
քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ
ճակատների ձևավորման, տանիքների, սարահին դռների, պատուհանների
համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր
գծից (մետր)

9.2. (*) հեռավորությունը հարևան
հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

եռահարկ առավելագույն սահմանել մինչև 15մ

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող
շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ Ն II-6.02-
2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»
շինարարական նորմերով սահմանված պահանջների
սպասիվում (հատուկ հաշվարկային մեթոդներ,
սեյսմակայունության բարձրացման
միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության
գործակիցը (կառույցի (կառույցների)
ընդհանուր մակերեսի հարաբերությունը
հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի

մինչև 70%

հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

15%

9.7. այլ պահանջներ

- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային և տեխնոլոգիական պահանջները
- Տանիքը նախատեսել կազմակերպված ջրահեռացմամբ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Նախատեսվում է քանդել դպրոց, կաթսայատուն և էլ. ենթակայան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

առկա է

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ զոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք Կցվում է ջրի մատակարարում

առկա է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է

առկա է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Կցվում է

առկա է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը Կցվում է

առկա է
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելանշտային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

չկան

12.6. աղբահանություն

համաձայն պամանագրի

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

կազմակերպել ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղածից հատակագծման նախագիծ
(կանոնադրական պահանջներին վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները, ապահովել հրշեջ հիդրատների ավելալուծումը
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Ուսխատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀԸՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան

19. Շրջակա միջավայրի պահպանում

- Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ
- ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, հնչյալես նաև, աղմուկին, թթուներին էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական ու տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջներ

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխախտ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

3 տարի, 1 փուլը՝ <<Աշխատանքային նախագիծ>>

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ առետական համալիր փորձաքննություն, ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Միջանկյալ համաձայնեցության հետ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսրիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փուլի ինան հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

չի պահանջվում

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական

- Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ

եզրակացությունների
ստացում

• Սիսիան համայնքի ղեկավարի հետ

(նշվում են տվյալ օրինակի համաձայնեցման օրինակ սահմանված պահանջները հուշարձանների ու
բնօրրան պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով
սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային
բաժանորդային
պահարանների
տեղադրում

27. Այլ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել <<
կառավարության արձրներ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
11.09.2017թ. <<բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և
շինությունների նախագծման փաստաթղթերի կազմը և բովանդակությունը
սահմանող կանոնները հաստատելու մասին>> N 128-Ն հրամանով
հաստատված դրույթներին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍԻԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՀԱՎՈՐԱՆՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «20» Օգոստոսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Բռնակոթ Կ.Ոսկանյան փողոց 3-րդ նրբանցք 6 ,դպրոցի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Շրջխորհրդի գործկոմի որոշում` 12/08/1980թ., Տեղեկանք հաշվեկշռից` 31/01/2002թ

4. ՀՈԴԱՄԱՍԻ ԲԼՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը` 09-023-0056-0020

Մակերեսի չափը (հա)` 3.4

Նպատակային նշանակությունը` բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը` ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	09-023-0056-0020-001	Դպրոցի շենք	4186.14 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	09-023-0056-0020-002	Կաթսայատուն	43.2 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	09-023-0056-0020-003	Ենթակայան	16.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գույքը ամրացված է ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչությանը՝ գույքի հանձնման-ընդունման ակտ՝ 20/12/2013թ.:Սույն վկայականը հանդիսանում է (30062014-09-0051) տրված վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ռուզաննա Ասրյան

զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.

